ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2017 թվականի N 129

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, 54.1-ին հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի N 12-Ն որոշման պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Կազմակերպել Նոր Արտամետ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի նախագծի քննարկման հանրային բաց լսումներ:
2. Հաստատել Նոր Արտամետ համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանին՝ համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղադրել համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը, բյուջեի նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2017 թ. նոյեմբերի 27

գ. Նոր Արտամետ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2017 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 129 ՈՐՈՇՄԱՆ

ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ 2018 Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀՐԱՎԵՐ

2017 թ. դեկտեմբերի 14-ին՝ ժամը 11:00-ին, Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանում (1-ին փողոց N 107 հասցեում) տեղի կունենա Նոր Արտամետ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեի նախագծի քննարկման հանրային բաց լսումներ:

Համայնքապետարանը հրավիրում է համայնքի բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու նախագծի քննարկմանը:

Ձեր առաջարկություններն ու դիտողությունները կարող եք ուղարկել norartamet.kotayq@mta.gov.am էլեկտրոնային հասցեով կամ ներկայացնել Նոր Արտամետի համայնքապետարան ոչ ուշ, քան ս/թ դեկտեմբերի 13-ը:

Նոր Արտամետի 2018 թվականի բյուջեի նախագծերին կարող եք ծանոթանալ nor-artamet-kotayk.am ինտերնետային կայքում՝ հայտարարությունների բաժնում: